

ՈՒՈԼԹԸՐ ՊԱՆՏԱԶԵԱՆ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷԶ- ՍԷՆ ՄԱՐՔ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 20 Մայիսի կեսօրին, ՍԷՆ ՄԱՐՔ կեդրոն այցելեցին Տէր եւ Տիկ. Ուոլթըր եւ Մէյրի Պանտազեաններ, ընկերակցութեամբ Տէր եւ Տիկ. Վեր. Ռոպեր եւ Թէրեզ Սարգիսեաններուն: Ուոլթըր Պանտազեան, կը վարէ Հաւորոտ Գարակօժգեան Հաստատութեան Նիւ Եորքի գրասեանակալի աստեանայետի պաշտօնը վերջին 20 տարիներու ընթացքին, իսկ Վեր. Սարգիսեան վերջին 40 տարիներու ընթացքին, կը վարէ տնօրէնի պաշտօնը Գարակօժգեան հաստատութեան Պէյրութի գրասեանակալին, որ կը կառավարէ Պէյրութի, Երեւանի, Աննարի, Հալէպի եւ Քամիշլիի կեդրոնները:



Զախէն՝ Տէր եւ տիկ. Լենա եւ Սէմ Բագուպեաններ, Տէր եւ Տիկ. Ուոլթըր եւ Մէյրի Պանտազեաններ, Տէր եւ Տիկ. Թէրեզ եւ Վեր. Ռոպեր Սարգիսեաններ

Պանտազեաններ

յատուկ շրջաքայութեամբ մը, կ'այցելէին Միջին Արեւելքի Գարակօժգեանի կեդրոնները: Այս տարի Գարակօժգեան հաստատութեան հետ գործակցութեան ՍԷՆ ՄԱՐՔի 40ամեակը ըլլալով, Պրն. Պանտազեան հետաքրքրութեամբ ունկնդրեց ՍԷՆ ՄԱՐՔի հիմնադիր եւ տնօրէնին՝ Սէմ Բագուպեանի վերջին 40ամեայ գործընթացքին եւ զանազան փորձառութիւններու մասին՝ Գարակօժգեան հաստատութեանէն ներս: Տէր եւ Տիկ. Պանտազեաններ պտտեցան ՍԷՆ ՄԱՐՔի զանազան բաժինները եւ հիացումով եւ գոհացումով արտայայտուեցան հոն տարուած բժախնդիր աշխատանքին մասին: ՍԷՆ ՄԱՐՔի հանդիպումէն ետք, Տէր եւ Տիկ. Սէմ եւ Լենա Բագուպեաններ ճաշի հրաիւրեցին պատուոյ հիւրերը Մէթրոփոլիթընի Վենեզիա ճաշարանը, որմէ ետք հրաժեշտ տուին անոնց մաղթելով յարատեւութիւն եւ ժուկալութիւն Գարակօժգեան հաստատութեան մեծ գործը շարունակելու համար:

AUST JOB FAIR

Պէյրութի AUST համալսարանը, Մայիս 17ի օրը իր բակը յատկացուց փառատօնի մը, ուր բազմաթիւ հաստատութիւններ ունեցան իրենց կրպակները: Այս կրպակներուն մէջ ամէն մէկ հաստատութիւն ցուցադրեց իրեն հետ առնչուած թղթիկներ, ծանուցման առարկաներ եւայլն, եւ պատահաւ մը ուր ան կրնար իր գործունէութիւնը պարզող նկարներ ցուցադրել: Այս փառատօնին նպատակը AUSTի շրջանաւարտ աշակերտներուն գործ հայթայթելու առիթ ստեղծել էր:



ՍԷՆ ՄԱՐՔն ալ ներկայութիւն էր հոն իր կրպակով եւ ներկայացուցիչներով՝ Տիկին Լենա Բագուպեանի եւ Օր. Սօնիա Կարպուշեանի: Աշխատանքի Նախարար Պուրոս Հարպ բացումը կատարեց ԻԸԶ ԵԶԿՍին եւ այցելեց իւրաքանչիւր կրպակ: Ան կանգ առաւ մեր կրպակին մօտ ալ եւ մօտէն ծանօթացաւ անոր գործունէութեան: Զարմանալի էր որ հարիւրաւոր հետաքրքրուողներ ներկայ էին եւ կը ծանօթանային հաստատութիւններու, ուր կրնային գործի դիմում կատարել: